ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033,ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am

№ Ե/39/833-25 «13» 11 2025թ.

«ՅՈՒՆԻՓԵՔ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝
ՊԱՐՈՆ Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ
/հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արցախի 46/2
էլ. հասցե՝ import3@unipackexpress.am/

Հարգելի՛ պարոն Աբրահամյան,

Տեղեկացնում ենք, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «ՅՈՒՆԻՓԵՔ» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի օգոստոսի 28-ին կնքված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/112-4 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում հատկացվել են ֆինանսական միջոցներ և սույն թվականի հոկտեմբերի 17-ին կնքվել է համաձայնագիր, սակայն Ձեր կողմից սահմանված ժամկետում մինչև սույն թվականի նոյեմբերի 06-ը ներառյալ 4-րդ չափաբաժնի մասով մատակարարումը չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ 2025 թվականի նոյեմբերի 13-ից «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի ամբողջական լուծվել է:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագիր կնքելիս Ձեր կողմից սահմանված կարգով ներկայացվել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրերի տեսքով, տեղեկացնում ենք, որ Պայմանագրի լուծման արդյունքում՝ ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/112-4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պետք է ապահովվի որակավորման ապահովման մասով՝ 112,500.00 (մեկ հարյուր տասներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով, պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 75,000.00 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամի չափով գումարների փոխանցումը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 1570083324940100 հաշվեհամարին:

Վերոնշյալի վերաբերյալ տեղեկացվել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ին:

Խնդրում ենք ապահովել վերոնշյալ գումարների փոխանցման իրականացումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարին լինելու դեպքում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն այդ հանգամանքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համապատասխան պատճառաբանված որոշմամբ, տրամադրելու է

...գրված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ

ԲԱԲԿԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

Կատարող՝ Վ. Էլոյան

Հեռ. +374 98389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)